Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահի
20.01.2017թ. թիվ 10-Լ որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կարգը **(այսուհետ նաև Կարգ)** սահմանում է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) 2017 թվականի փետրվարի 11-ի ընդհանուր ժողովի (**այսուհետ՝ Ընդհանուր ժողով**) կազմակերպման և անցկացման գործընթացում Պալատի օժանդակության պայմանները և ընթացակարգը:

1.2. Պալատի խորհրդի անդամի և կարգապահական գործ նախապատրաստող անձի թեկնածուները (**այսուհետ՝ Թեկնածուներ**) Կարգով նախատեսված Պալատի միջոցներից օգտվում են հավասար պայմաններով:

1.3. Կարգը չի կարող խտրական կիրառվել փաստաբանների, այդ թվում՝ Թեկնածուների նկատմամբ:

1.4. Կարգի կիրառման նկատմամբ հսկողությունն իրականացնում է Պալատի ֆինանսական տնօրենը (**այսուհետ՝ Պատասխանատու**):

2. ՊԱԼԱՏԻ ԿԱՅՔԷՋԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1. Ընդհանուր ժողովի վերաբերյալ բոլոր տեղեկությունները (հայտարարություններ, լուրեր, որոշումներ, արձանագրություններ և այլ նյութեր) հրապարակվում են Պալատի կայքէջում առկա համապատասխան բաժիններում:

2.2. Պալատի կանոնադրության 13.6 կետին համապատասխան Պալատի կայքէջում հրապարակելու համար Թեկնածուներից յուրաքանչյուրը կարող է առավելագույնը երկու անգամ ներկայացնել իր քարոզչական նյութը այն պայմանով, որ՝

- նյութը պետք է պարունակի թեկնածուի ստորագրությունը.

- նյութը չի կարող պարունակել վիրավորական արտահայտություններ կամ զրպարտչական տեղեկություններ.
- նյութը պետք է ներկայացվի նաև էլեկտրոնային տարբերակով (էլեկտրոնային փոստով կամ կրիչով):

2.3. Խմբային կարգով (երկու կամ ավելի Թեկնածուների կողմից) քարոզչական մեկ նյութ ներկայացնելու դեպքում, այն հաշվարկվելու է որպես այդ նյութի բոլոր հեղինակների կողմից ներկայացված մեկական առանձին նյութ:

2.4. Կարգի 2.2 կետում նշված նյութը Պալատի կայքէջում հրապարակելու հարցը որոշում է Պատասխանատուն՝ նյութը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Եթե Թեկնածուի՝ Պալատի կայքէջում նյութ հրապարակելու հայտը (դիմումը) չի համապատասխանում Կարգի 2.2 կետում նշված որևէ պայմանի, ապա Պատասխանատուն կարող է մերժել հայտը՝ գրավոր կարգով պատճառաբանելով մերժումը:

2.5. Թեկնածուն Պատասխանատուի մերժման հարցով կարող է դիմել Պալատի հաշվիչ հանձնաժողովին: Պալատի հաշվիչ հանձնաժողովի որոշումը՝ նյութի հրապարակումն ապահովելու վերաբերյալ, հիմք է նյութն անհապաղ կայքէջում հրապարակելու համար:

2.6. Պալատը չի օժանդակելու թեկնածուներին կամ փաստաբաններին նախընտրական քարոզչության ժամանակահատվածում փաստաբաններին էլեկտրոնային փոստով գրություններ, ուղերձներ կամ այլ հայտարարություններ ուղարկելու հարցում, բացառությամբ 4.3 կետում նշված դեպքի:

2.7. Կարգի 2.2 - 2.6 կետերում նշված կանոնները վերաբերում են նաև «Փաստաբանի օր» սահմանելու հարցով առաջարկ ներկայացրած փաստաբաններին:

3. ՊԱԼԱՏԻ ԴԱՀԼԻՃԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

3.1. Պալատը հնարավորություն է ստեղծում Թեկնածուին առնվազն 1 (մեկ) ժամով անվճար օգտվել Պալատի՝ ք.Երևան, Զաքիյան 2 հասցեի 4-րդ հարկում գտնվող դահլիճից՝ հետևյալ կարգով.

- մինչև 2017թ. հունվարի 24-ը թեկնածուն պետք է գրավոր ներկայացնի հայտ՝ նշելով իր նախընտրած օրը և ժամը, ինչպես նաև հանդիպման ակնկալվող ողջամիտ տևողությունը, որը չի կարող գերազանցել 2 (երկու) ժամը.
- Պատասխանատուն Թեկնածուներից ստացված հայտերի հիման վրա մինչև 2017թ. հունվարի 26-ը (ներառյալ) որոշում է դահլիճի զբաղվածության գրաֆիկը և հրապարակում է այն Պալատի կայքէջում:

3.2. Այն դեպքում, երբ Թեկնածուների՝ դահլիճից օգտվելու հայտերում նշված օրերը և ժամերը մասամբ կամ ամբողջությամբ համընկնում են, ապա Պատասխանատուն՝ հաշվի առնելով արդարության ընդհանուր սկզբունքը ինքնուրույն է որոշում Թեկնածուների կողմից դահլիճից օգտվելու ժամանակացույցը: Հայտերի մեծ քանակի դեպքում, Պատասխանատուն կարող է հանդիպման տևողությունը սահմանափակել 1 (մեկ) ժամով՝ բոլոր Թեկնածուների համար:

4. ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԱՆԱՎԵՃ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴԱՀԼԻՃ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4.1. Պալատի խորհրդի անդամների կամ նախապատրաստողների առնվազն 10 (տասը) Թեկնածուների գրավոր հայտի (հայտերի) դեպքում, Պալատը՝ խորհրդի անդամների կամ նախապատրաստողների բոլոր թեկնածուների համար բանավեճ կամ քննարկում անցկացնելու նպատակով, մեկ անգամ կարող է ապահովել Պալատի գտնվելու վայրից դուրս դահլիճի վարձակալումը:

4.2. Բանավեճի կամ քննարկման անցկացման նպատակով վարձակալած դահլիճում կազմակերպչական գործողություններն ապահովելու է Պալատը:

4.3. Բանավեճի կամ քննարկման համար նախատեսված վայրի և ժամանակի, ինչպես նաև այլ պայմանների վերաբերյալ հայտարարությունը նախապես (առնվազն մեկ օր առաջ) տեղադրվում է Պալատի կայքէջում, ինչպես նաև կարող է ուղարկվել փաստաբաններին՝ էլեկտրոնային փոստի միջոցով:

5. ՄԱՐԶԵՐԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՈՎ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

5.1. Մարզերի փաստաբանների՝ Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունքն իրացնելու համար, Պալատը կապահովի Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերից Երևան քաղաք (քվեարկության անցկացման վայր) տեղափոխումը և հետադարձը դեպի մեկնման վայր՝ հետևյալ կարգով և պայմաններով՝

- Տրանսպորտային միջոցը կամ միջոցներն (**այսուհետ՝ Տրանսպորտային միջոց**) ապահովում է Պատասխանատուն՝ հաշվի առնելով նաև տվյալ մարզի մարզային համակարգողի առաջարկը՝ փաստաբանների քանակի, երթուղու և մեկնման ժամի վերաբերյալ.
- Տրանսպորտային միջոցը պետք է երթուղին սկսի նախապես հայտարարված ժամին և վայրից.
- Տրանսպորտային միջոցից կարող են օգտվել տվյալ մարզում գտնվող բոլոր փաստաբանները.
- Ըստ մարզերի՝ Տրանսպորտային միջոցների երթուղիների, մեկնման ժամի և վայրի մասին տեղեկությունները մինչև 2017 թվականի փետրվարի 9-ը պետք է հրապարակվեն Պալատի կայքէջում:

5.2. Պատասխանատուն կամ մարզային համակարգողը պարտավոր է ապահովել, որպեսզի Տրանսպորտային միջոցում փակցվի՝ «Քարոզչությունն արգելվում է» հիշեցում-թերթիկ կամ քարոզչությունն արգելված լինելու մասին իրազեկել Տրանսպորտային միջոցից օգտվող փաստաբաններին:

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1. Կարգն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 20-ից և գործում է մինչև 2017 թվականի փետրվարի 12-ը:

6.2. Հաշվիչ հանձնաժողովի պահանջով Կարգն ենթակա է փոփոխման: